ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. 060-80-50-80,
Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

թիվ 263-17
28 հունիսի, 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի, կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու կողմից 2017 թվականի հունիսի 28-ին կայացված ութերորդ հերթական նիստի ժամանակ ընդունված որոշումները՝ N 29-Ա, N 30-Ն և N 31-Ա:

Առդիր՝ վեց էջ:

Հարգանքով
Օձուն համայնքի ղեկավար *Ա. Տիրատյան*

Կատարող՝ Ն. Վարդանյան
հեռ. 0253-6-16-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2017 թվական, N 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ՈՒԹԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 10-րդ և 12-րդ մասերի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ հոդվածի՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 28-ի ութերորդ հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ (5) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Դ. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՏԻՏԱՆՅԱՆ
Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2017թ., հունիսի 28,
Լոռու մարզ, գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2017 թվականի հունիսի 28-ի N 29-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ՈՒԹԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0464-0052 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ 06-112-0464-0052-001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՎԵՏԻՔ ԱՆՏՈՆՅԱՆԻ, ՈՍԿԱՆ ՂՈՒԼՅԱՆԻ, ՄԱՆՎԵԼ ՇՈՒԼԻՆՅԱՆԻ, ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՍՈՆ ՄԱՅԻԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2017 թվական, N 30-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0464-0052 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ 06-112-0464-0052-001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, 464-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, 77-րդ և 80-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 35-րդ, հոդվածների, 56-րդ հոդվածի առաջին և հինգերորդ մասերի, 61-րդ հոդվածի, 63-րդ հոդվածի, 67-րդ, 68-րդ, 87-րդ, հոդվածների, «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածի 10-րդ մասի՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի սեփականություն համարվող հողամասերի, շենքերի և շինությունների օտարման ամենամյա ծրագիրը, անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման մասին եզրակացությունը, հողամասի հատակագիծը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան և համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման համար, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ Լոռու մարզի, գյուղ Օձուն, փողոց 42 N 27 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0464-0052 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.0332 հեկտար մակերեսով հողամասը, հողամասի վրա առկա 06-112-0464-0052-001 կադաստրային ծածկագրով արտադրական նպատակային նշանակության 281.92 քառակուսի մետր մակերեսով շինությունը՝ անասնաշենքը (այսուհետ՝ անշարժ գույք) օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար՝ գյուղատնտեսական արտադրական գործունեություն իրականացնելու նպատակով օտարել հրապարակային սակարկություններով՝ բաց աճուրդով:

1) Աճուրդի մեկնարկային գին սահմանել հինգ հարյուր հազար (500 000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

2. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված

տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմաը:

2) Անշարժ գույքը օտարելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով այն նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար.

3. Համայնքն իր տարածքում տնտեսական գործունեությունը խթանելու նպատակով իր օտարած հողի նկատմամբ հինգ տարվա ընթացքում ունի առաջնային հետգնման իրավունք հողամասի շուկայական գնով (Համայնքի հողի օտարման դեպքում օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն համայնքի հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող ծրագրի ժամկետները: Պայմանագրի խախտման դեպքում դա կարող է լուծվել դատական կարգով):

1) Անշարժ գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցներն օգտագործվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ուղղվում են համայնքային բյուջեի ֆոնդային մաս:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել անշարժ գույքի աճուրդը: Աճուրդ անցկացնելու մասին ընդունել համապատասխան որոշում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել այդ մասին հայտարարության հրապարակումը:

5. Անշարժ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանուն՝ առաջիկա նիստում հաստատելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (5) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Դ. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Ա. ՁԱՎԱՐՅԱՆ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2017թ., հունիսի 28,
Լոռու մարզ, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2017 թվական, N 31-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՎԵՏԻՔ ԱՆՏՈՆՅԱՆԻ, ՈՍԿԱՆ ՂՈՒԼՅԱՆԻ, ՄԱՆՎԵԼ ՇՈԼԻՆՅԱՆԻ, ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՍՈՆ ՄԱՅԻԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի «ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 300 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 822-Ն որոշման՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի բնակիչներ Ավետիք Ամրաստանի Անտոնյանի, Ոսկան Սանասարի Ղուլյանի, Մանվել Հրանտի Շոլինյանի և Աշոտ Թոմոյի Պետրոսյանի նկատմամբ սահմանել գույքահարկի գծով, իսկ քաղաքացի Սամսոն Արամի Մայիլյանի նկատմամբ հողի հարկի գծով արտոնություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (5) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Դ. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Ա. ՁԱՎԱՐՅԱՆ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2017թ., հունիսի 28,
Լոռու մարզ, գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2017 թվականի հունիսի 28-ի N 31-Ա որոշման

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՎԵՏԻՔ ԱՆՏՈՆՅԱՆԻ, ՈՍԿԱՆ ՂՈՒԼՅԱՆԻ, ՄԱՆՎԵԼ ՇՈԼԻՆՅԱՆԻ, ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՍՈՆ ՄԱՅԻԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N	Հարկի կենսագրական տվյալները՝ Անունը, Հայրանունը, ազգանունը կամ անվանումը, ֆիզիկական դեմքի հասցեն կամ իրավաբանական անձի գտնվելու վայրը	Հարկ վճարողի գտնվելու (գտնվելիք) հասցեն	Գույքի գտնվելու հասցեն	Գույքի տեսակը (մակնիշը)	Սոցիալական արժեքը (գները) (դրամով)	Հ Ա Հ	Հարկային հսկողության կենտրոնական ծառայության կամ նրա տարածքային մարմնի կողմից հարկային գնահատված գույքի կադաստրային արժեքը (դրամով)	Հարկի դրույքաչափը՝ ՀՀ դրամական միավորներով	Հարկի գանձման ամիսը, ամսաթիվը	Հարկային արտոնությունները՝ ներառյալ դրանց հիմքերը (դրամաշնորհ, դրամաշնորհային ծրագիր, նվեր, նվիրատվություն, ՀՀ դրամական միավորներով հարկային արտոնության չափը՝ ՀՀ դրամով	
										արտոնության տեսակը	արտոնության չափը՝ ՀՀ դրամով
1	2	3	4		5	6	7	8	9	10	11
1	Ոսկան Սանասարի Ղուլյան	ՀՀ ԼՄ գ. Օձուն, փող. 3, փկղ. 2, տուն 9	գ. Օձուն	փոխադրամիջոց, մակնիշը՝ OPEL VECTRA, պետ. համարանիշ՝ 34VS976, 1997թ.		13584469	12414	հարկի նվազեցում	28.06.2017	2017թ. գույքահարկի ապառք	11500
										2016թ. գույքահարկի տույժ	914
2	Ավետիք Ամրաստանի Անտոնյան	ՀՀ ԼՄ գ. Օձուն, փող. 4, տուն 26/1	գ. Օձուն	փոխադրամիջոց, մակնիշը՝ VAZ 21213, պետ. համարանիշ՝ 34NT649, 1999թ.		13811947	8000	հարկի նվազեցում	28.06.2017	2017թ. գույքահարկի ապառք	8000
3	Մանվել Հրանտի Շոլինյան	ՀՀ ԼՄ գ. Օձուն, փող. 5, տուն 46	գ. Օձուն	փոխադրամիջոց, մակնիշը՝ OPEL ASTRA, պետ. համարանիշ՝ 18NM008, 1999թ.		S0250246	7500	հարկի նվազեցում	28.06.2017	2017թ. գույքահարկի ապառք	7500
4	Աշոտ Թոմոյի Պետրոսյան	ՀՀ ԼՄ գ. Օձուն, փող. 1, նրբ. 2 տուն 22	գ. Օձուն	փոխադրամիջոց, մակնիշը՝ ՎԱԶ 2121, պետ. համարանիշ՝ 38LS241, 1993թ.		13619588	8349	հարկի նվազեցում	28.06.2017	2016թ. գույքահարկի ապառք	6000
										2016թ. գույքահարկի տույժ	2349
5	Սամսոն Արամի Մայիլյան	ՀՀ ԼՄ գ. Օձուն, փող. 1, տուն 36/2	գ. Օձուն	գյուղ. նշանակության հողեր		13671411	41857	հարկի նվազեցում	28.06.2017	2008թ. հողի հարկի ապառք	1647
										2008թ. հողի հարկի տույժ	6543
										2009թ. հողի հարկի ապառք	1647
										2009թ. հողի հարկի տույժ	1065
										2010թ. հողի հարկի ապառք	1647
										2010թ. հողի հարկի տույժ	1066
										2011թ. հողի հարկի ապառք	1647
										2011թ. հողի հարկի տույժ	904
										2012թ. հողի հարկի ապառք	1647
										2012թ. հողի հարկի տույժ	2709
										2013թ. հողի հարկի ապառք	1647
										2013թ. հողի հարկի տույժ	2163
										2014թ. հողի հարկի ապառք	1647
										2014թ. հողի հարկի տույժ	2163
										2015թ. հողի հարկի ապառք	6798
										2015թ. հողի հարկի տույժ	4899
										2016թ. հողի հարկի ապառք	1647
										2016թ. հողի հարկի տույժ	371

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ